

«Հաստատում եմ»

Վ.Բրյուսովի անվան պետական
համալսարանի ուսումնագիտական
աշխատանքների հարցերով
պրոռեկտոր Դ. Ղազարյան



Կ ա Ր Ծ Ի Ք

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Համլետ Սերգեյի Սիմոնյանի « Կյանքի կազմակերպման մշակույթը որպես
սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեմայով Թ. 00. 01**

**«Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2025 թ. մայիսի 12-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, փ.գ.թ., դոցենտ Կարինե Յարալյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Վահե Դավթյանը, փ.գ.թ., դոցենտ Լևոն Բաբաջանյանը, փ.գ.թ., ավագ դասախոս Վարդան Ասլանյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Գեորգի Միրզաբեկյանը, ք.գ.թ., ավագ դասախոս Տիգրան Մուղնեցյանը, դասախոս Անիկ Մարգարյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 013 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Համլետ Սերգեյի Սիմոնյանի «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեմայով ատենախոսության մասին Թ.00.01՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ Կարինե Յարալյանն ու Լևոն Բաբաջանյանը՝ հրապարակելով իրենց գրավոր կարծիքները:

Արտահայտվեցին պրոֆեսոր Վ.Դավթյանը, ավագ դասախոսներ Ա.Պետրոսյանը, Գ.Միրզաբեկյանը, Վ.Ասլանյանը, Տ.Մուղնեցյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչ Կ.Յարալյանը:

Քննարկելով Համլետ Սերգեյի Սիմոնյանի «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեմայով ատենախոսությունը՝ նիստի մասնակիցներն ընդունեցին հետևյալ որոշումը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համլետ Սիմոնյանի ներկայացված ատենախոսության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող քաղաքակրթական և սոցիոմշակութային փոխակերպումների պատճառով ի հայտ եկած մարտահրավերներին դիմակայելու և հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է նորովի իմաստավորել և արդիականացել նախորդ սերունդների համակարգաստեղծ և համակարգապահական գործառույթ իրականացնող կենսափիլիսոփայության, կյանքի կազմակերպման մշակույթի տարրերը, ինչն առանցքային նախապայման է սերունդների կենսաաշխարհի կառուցարկման և համակեցության շարունակականությունը ապահովելու համար: Միաժամանակ, չնայած նախորդ սերունդների կյանքի կազմակերպման մշակույթի ու սոցիալական կյանքի կառուցադրող ինստիտուցիոնալ համակարգերի արդիականացման անհրաժեշտությանը, անհրաժեշտ է նաև պահպանել և հաջորդ սերունդներին փոխանցել սոցիալական ինքնության և նույնականության համընդհանուր հիմունքները: Խնդրի կարևորությունը պայմանավորված է նաև ժամանակակից աշխարհում տեղի ունեցող մարդաբանական, քաղաքակրթական և սոցիոմշակութային փոխակերպումների արդյունքների և հետևանքների տեսանկյունից ապագայի իմաստավորման անհրաժեշտությամբ, ինչը կնպաստի սերունդների միջև պատասխանատվության, կայունության և արդարության պայմանների ապահովմանը:

Հայաստանում ընթացող սոցիոմշակութային արմատական փոխակերպումների փուլում՝ սոցիալական ինստիտուտների ապագայամետ ռազմավարության բացթողումները, կրթական համակարգում տեղի ունեցող լավարկումների երկարաժամկետ ազդեցությունների արդյունավետության կարևորումը անհրաժեշտ է դարձնում դեպի կայուն ապագայի կերտմանը միտված գոյաբանական ծրագրի մշակումն ու, այդպիսով՝ սերունդների համագոյակցման պայմանների ստեղծումը: Խնդրի ուսումնասիրությունը այդ ծրագրի իրականացմանն ուղղված կարևոր և առանցքային նախապայմաններից մեկն է: Բացի այդ, հայաստանյան մասնագիտական հետազոտություններում բավարար չափով ուսումնասիրված չէ հայ ժողովրդի ինքնության և համակեցության կազմակերպման մշակույթի առանձնահատկությունների խնդիրը, ինչի մասնակի լուծմանն է ուղղված սույն աշխատանքը:

Պետք է նշել, որ հեղինակի ներկայացված փաստարկները լիովին հիմնավորում են աշխատանքի արդիականությունը՝ դրան հաղորդելով ոչ միայն տեսական, այլ նաև կիրառական նշանակություն՝ հաշվի առնելով սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային համաշխարհային և հայաստանյան արդի համատեքստը:

Հեղինակին հաջողվել է աշխատանքում սահուն կերպով կապակցել փիլիսոփայական մասնագիտական հետազոտություններում տարբերակվող երկու հիմնական՝ կոնտինենտալ (Հ.Արենդթ, Է.Հուսերլ, Խ.Օրտեգա-ի-Գասսետ, Ժ.Դերիդա, Յ.Հաբերմաս և այլն) և անալիտիկ (Մ.Նուսբաում, Զ.Ռոլս, Բ.Բերրի, Ի.Բեռլին, Դ.Փարֆիթ, Ա.Գոսսերիես, Ու.Կիմլիկա և այլն) ուղղությունները ներկայացնող հեղինակների հետազոտական մոտեցումները: Ավելին՝ հետազոտական աշխատանքում օգտագործվել են նաև քաղաքագիտական, պատմագիտական, մշակութաբանական, տնտեսագիտական և սոցիոլոգիական բնույթի հետազոտությունների արդյունքները: Հետազոտական այս մեթոդաբանության կիրառման շնորհիվ աշխատանքին հաղորդվել է միջգիտակարգային բնույթ, ինչից էականորեն շահել է հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Ատենախոսությունում կիրառվել են

նաև հայ հեղինակների (Է.Հարությունյան, Վ.Միրզոյան, Գ. Սողոմոնյան և այլն) աշխատանքները, ինչն ապահովել է հետազոտության առնչությունը հայաստանյան մասնագիտական հետազոտական շրջանակի հետ:

Ատենախոսությունում առաջադրվել և հիմնավորվել են գիտական նորույթ պարունակող մի շարք թեզեր: Նշենք դրանցից մի քանիսը՝ ա/ հիմնավորվել է այն թեզը, որ սերունդների համակեցությունը կանոնակարգող ինստիտուցիոնալ նախագծի շնորհիվ պահպանվում և վերարտադրվում են նախորդ սերունդների կողմից ձևավորված կենսակերպի առանձնահատկությունները, բ/ հիմնավորվել է այն դրույթը, որ կյանքի կազմակերպման մշակույթը իրենից ներկայացնում է սոցիալական կյանքը կառուցադրող կանոնների և նորմերի ինստիտուցիոնալ համակարգ, գ/ առաջադրվել և հիմնավորվել է այն դրույթը, որ սերունդների համակեցության կազմակերպման մշակույթը ոչ միայն պետք է ղեկավարվի նախնիների կյանքի կանոնակարգման սկզբունքներով, այլև պետք է ժամանակի հանգամանքներին և մարտահրավերներին համընթաց արդիականացվի, դ/ հիմնավորվել է այն թեզը, որ նախնիների կյանքի կազմակերպման մշակույթը աստիճանաբար կորցնում է երբեմնի համակարգաստեղծ ու համակարգապահական գործառույթներն ու կարողությունները, ե/ ապացուցվել է այն դրույթը, որ հետարդիականության մեր ժամանակներում սերունդների խորացող անջրպետը հաղթահարելու համար պետք է որոշակի կերպով վերաիմաստավորվի պատմական հիշողությունը, զ/ առաջ է քաշվել և հիմնավորվել է այն թեզը, որ սոցիալական ինստիտուտների բարենորոգման ճանապարհին հանդիպող հիմնական խոչընդոտներից մեկը ապագա սերունդների երկարաժամկետ խնդիրների հաշվին ներկայի կարճաժամկետ շահերին ու խնդիրներին առաջնահերթություն տալն է: Առաջադրվել և հիմնավորվել են նաև գիտական նորույթ պարունակող մի շարք այլ դրույթներ ևս: Կարելի է վստահորեն պնդել, որ աշխատանքը լիովին բավարարում է գիտական նորույթի պարունակման պահանջին:

Սույն ատենախոսությունը հարստացնում է ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ մասնագիտական հետազոտությունների պաշարը: Հայաստանյան

փիլիսոփայական-բարոյագիտական մասնագիտական հետազոտությունների համատեքստում այն առավել կարևոր նշանակություն ունի, քանի որ միջսերնդային արդարության, սերունդների երկխոսության և համակեցության վերաբերյալ նման համընդգրկուն և միջգիտակարգային բնույթ ունեցող հետազոտություններ չկան, և այս աշխատանքը կարող է կարևոր դերակատարություն ունենալ նշված և հարակից խնդիրների վերաբերյալ մասնագիտական քննարկում նախաձեռնելու և ծավալելու գործում:

Հետազոտության արդյունքները կարող են լայնորեն օգտագործվել աշխատանքի հիմնական և հարակից խնդիրների վերաբերյալ հումանիտար և հասարակագիտական մասնագիտական ոլորտներում, ուսումնական-կրթական ձեռնարկներում, սոցիալ-քաղաքական խնդիրների վերաբերյալ փորձագիտական վերլուծություններում, սոցիալ-քաղաքական ոլորտային ծրագրերի մշակումներում: Միաժամանակ դրանք կարող են կիրառվել ԲՈԻՀ-երում դասավանդվող «Փիլիսոփայություն», «Սոցիալական Փիլիսոփայություն», «Քաղաքական Փիլիսոփայություն», «Բարոյագիտություն», «Ազգային ինքնություն» առարկաների շրջանակում որպես օժանդակ նյութ:

Չնայած ծավալուն և բավականին հետաքրքիր վերլուծությանն ու արդյունքներին, տվյալ աշխատանքը զերծ չէ թերություններից: Մասնավորապես.

- Հետազոտական առանցքային որոշ հասկացություններ, ինչպես օրինակ՝ «գոյաբանական կարգ», «կյանքի կազմակերպման մշակույթ», «պատասխանատու կախվածություն», «սոցիոմշակութային փոխակերպումներ» և այլն, թեև այս կամ այն կերպ նկարագրվում են հետազոտական աշխատանքում, սակայն հստակորեն սահմանված չեն, ինչի հետևանքով հաճախ անհասկանալի է մնում, թե հեղինակն ի՞նչ բովանդակություն է հաղորդում նշված հասկացություններին:
- Հեղինակը աշխատանքի տարբեր հատվածներում կատարում է մի շարք էմպիրիկ կամ փաստական պնդումներ, ինչպես օրինակ՝ «համաշխարհայնացման արդի դարաշրջանում, որտեղ սոցիոմշակութային փոխակերպումներն անասելի արագությամբ ու մասշտաբներով ձևավորում

են սերունդների կենսաշխարհի մի նոր պատկեր, ազգային-սոցիալական կյանքի կազմակերպման այն մշակույթի նորմերն ու կանոնները, որոնք արդիական էին անցյալում, նոր սերունդների համար կարող են դառնալ հարկադրանք» (էջ 22), «... երբեմնի ավանդապաշտական հասարակություններում համակեցության մշակույթն արմատական փոխակերպումներ չէր ապրում...» (էջ 26), «հետարդիականության մշակույթը, ունենալով ապակենտրոնությունն ու ապակառուցողականությունը որպես մեթոդաբանական գործիքակազմ, կարծես գլխիվայր է շրջում մարդկային պատմության առանցքը՝ մարդկային միտքն ուղղորդելով մտածողության ուրիշ հորիզոններ» (էջ 48-49) և այլն: Նման պնդումները փիլիսոփայական-հետազոտական բնույթի աշխատանքներում կամ պետք է ակնհայտ իրողություններ լինեն, կամ պետք է հիմնավորվեն՝ վկայակոչելով այլ գիտակարգերի, տվյալ դեպքում՝ պատմագիտության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, մշակութաբանության ոլորտների հեղինակավոր և արժանահավատ աղբյուրներին, մինչդեռ աշխատանքում դա արված չէ :

- Շարադրանքի որոշ հատվածներում հաճախ հանդիպում են «մարդուն» բնութագրող պնդումներ, ինչպես օրինակ՝ «...մարդը՝ որպես պատմական հիշողության սուբյեկտ, դեռևս չի կարողացել զարգացնել իր առջև դրված պատմական մարտահրավերներին համապատասխան ռազմավարություն, որը հիմնված կլինի անցյալի հետ կառուցողական երկխոսության, անցյալի վերարժևորման, ներկայի խնդիրների ընդունման, ինչպես նաև ապագայի հեռանկարային նախագծի կառուցարկման վրա» (էջ 63), «Մարդը, առերեսվելով անցյալի, ներկայի և ապագայի միջև առկա տարատեսակ կապերին ու փոխհարաբերություններին, կարելի է ասել, դառնում է իր գոյաբանական կարգավիճակը որոշարկող սուբյեկտ» (էջ 64), որոնցում մասնավորեցված չէ, թե կոնկրետ ո՞ր մարդու մասին է խոսքը: Վիճելի է այն մոտեցումը, որ կարելի է նման ընդհանուր հատկություններով բնութագրել ժամանակակից մարդուն, որը, աշխարհագրական,

սոցիալական, քաղաքական, կրոնական, ազգային և շատ այլ առանձնահատկություններով պայմանավորված, կարող է ունենալ շատ տարբեր բնութագրիչներ:

- Աշխատանքում հանդիպում են մի շարք վիճելի պնդումներ, որոնք հիմնականում վերաբերում են «ժամանակակից աշխարհի» կամ «արդի սոցիոմշակութային փոխակերպումների» և «նախկին աշխարհի» կամ «նախկին սոցիոմշակութային փոխակերպումների» համեմատությանը: Օրինակ՝ «սոցիոմշակութային մերօրյա փոխակերպումներն անշեղորեն «նպաստում են» սերունդների ինքնության ճգնաժամին ու մինչև անգամ ինքնության կորստին» (էջ 38), «ժամանակակից կյանքում մարդ-աշխարհ բարդ փոխհարաբերության պայմաններում աշխարհը մարդու համար կարծես դառնում է ավելի հասկանալի և կանխատեսելի, բայցևայնպես փոխակերպման յուրաքանչյուր ալիք մարտահրավեր է նետում աշխարհի քողազերծմանը՝ դարձնելով վերջինս նույնքան անհասկանալի ու անկանխատեսելի» (էջ 111): Ընդ որում, աշխատանքում «ժամանակակից աշխարհին» վերագրվող հատկությունները կամ բնութագրությունները հաճախ ճգնաժամային բնույթ ունեն: Կարծում ենք, որ այս մոտեցումը հանգամանակից հիմնավորման կարիք ունի:
- Աշխատանքի 1.2 ենթագլխում հաճախ են օգտագործվում «հետարդիականություն», «հետարդիական մշակույթ», «հետարդիական փիլիսոփայություն» եզրույթները: Խնդիրը, սակայն, այս եզրույթների օգտագործումը չէ, այլև՝ հետարդիականության կամ հետարդիական փիլիսոփայության՝ ժամանակակից աշխարհի սոցիալ-քաղաքական ու սոցիոմշակութային գործընթացների վրա ունեցած ազդեցության չափազանցումն է: Օրինակ՝ «Հետարդիականությունը վերաձևավորել է աշխարհի պատկերը՝ առաջադրելով առաջ շարժվելու նոր մեխանիզմների համախումբ...» (էջ 49): Եթե անգամ հետարդիական փիլիսոփայությունը կամ հետարդիականությունը ունեցել են ինչ-որ նշանակալի ազդեցություն, ապա դա նկատելի է հիմնականում այսօրվա աշխարհի որոշ

տարածության (արևմտաեվրոպական, հյուսիսամերիկյան որոշ քաղաքներ) և որոշակի ժամանակահատվածի (20-րդ դարի վերջ) պարագայում: Տպավորություն է ստեղծվում, որ այլ աշխարհամասերն ու մայրցամաքները հայտնվել են արդի աշխարհի սահմաններից դուրս:

- Աշխատանքում հաճախ է որպես ակնհայտ իրողություն ներկայացվում «սոցիոմշակութային արմատական արդի փոխակերպումներ» երևույթը, սակայն չի նկարագրվում, թե կոնկրետ ի՞նչ «արմատական փոխակերպումների մասին է խոսքը: Ցանկալի կլիներ, որ հեղինակը առանձին ենթազվիտում կամ մի քանի պարբերությամբ բնութագրեր այդ փոխակերպումները:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները: Համլետ Սերգեյի Սիմոնյանի «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն կատարած ավարտուն հետազոտական աշխատանք է, որում լուծված են գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության և սեղմագրի տեքստը շարադրված է հստակ և տրամաբանված, ինչպես նաև համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Հաշվի առնելով շարադրվածը, կարծում ենք, որ Համլետ Սերգեյի Սիմոնյանի «Կյանքի կազմակերպման մշակույթը որպես սերունդների համակեցության գոյաբանական կարգ» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը

ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը արժանի է Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկել և հաստատվել է ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2025 թ. մայիսի 12-ի թ. 7 նիստում:



Կարինե Յարայան
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ

«Փիլ.գիտ. թեկնածու Կարինե Յարայանի ստորագրությունը հաստատում եմ»:

ԲՊՀ գիտ. քարտուղար՝



Համիկ Փիլավջյան

19.05.2025թ.



Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան
Հասցե՝ ք.Երևան 0002, Թումանյան 42,
Հեռ.՝ (010) 522 020